




ՀՈՎՍՏՓ ԱՐԳԱՐԻ ՕՐՐԵԼԻ

(Մենդյան 70-ամյակի առթիվ)

1957 թ. մարտի 20-ին քաղաքացիական ակադեմիկոսի զիտնական, հայագետ, կովկասագետ և արևելագետ ակադեմիկոս Հովսեփ Արգարի Օրբելու 70 տարին: Նրա կյանքն ընթացել է գիտա-ստեղծագործական և հասարակական գործունեության լայն ուղիով: Մեծ և բազմակողմանի է նաև Հ. Օրբելու վաստակները, հանրահայտ է նրա աշխատությունները:

Ավարտելով դասական գիմնազիան Խիֆլիսում, Օրբելին 1904 թ. ընդունվում է Պետերբուրգի համալսարանը և 1911 թ. ավարտում նրա դասական ու արևելագիտական բաժինները: Հովսեփ Օրբելին որպես զիտնական աճել ու ձևավորվել է սուսական արևելագիտության նշանավոր միջավայրում: 1906 թվականից մինչև 1914 թվականը Հ. Օրբելին մասնակցել է Հայաստանի միջնադարյան նշանավոր մայրաքաղաք Անիի պեղումներին, որոնք կատարվում էին Մառի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ: 1911 թվականին Օրբելին արդեն ճանաչված զիտնական է և Գիտությունների ակադեմիան նրան գործուղում է Արևմտյան Հայաստան՝ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու համար:

1917 թվականին Օրբելին իր ուսուցիչների հետ միասին առանց վարանելու և անվերապահորեն ընդունում է Հոկտեմբերյան Մոցիալիստական Մեծ ուժեղացիան: 1918—1920 թթ. Օրբելին իրեն հատուկ մեծ եռանդով գիտական և կազմակերպչական լայն գործունեություն է ծավալում Պետերբուրգի Հնագիտական ինստիտուտում, Մոսկվայի Հազարյան ինստիտուտում և այլուր: Նա մեծ մասնակցություն է ունենում Հազարյան ինստիտուտի վերակառուցման, Ռուսական Նյութական կուլտուրայի ակադեմիայի կազմակերպման աշխատանքներին: Օրբելին մեծ մասնակցություն է ցուցաբերում Սովետական երկրի կուլտուրական շինարարությանը՝ Սովետական իշխանության ստացին տարիներից սկսած:

Սկսած 1911 թ.՝ Հովսեփ Օրբելին մեծ գիտա-կազմակերպչական աշխատանք է կատարում Պետական էրմիտաժում: Նա ստեղծում է էրմիտաժի արևելյան բաժինը, 1934 թվականից մինչև 1951 թվականը Օրբելին վարել է Պետական էրմիտաժի գիրեկտորի պաշտոնը:

Հովսեփ Օրբելին հայ մոզոլոգի հետ կապված է ոչ միայն ծագումով և իր գիտական ստեղծագործություններով, այլև իր խոշոր ծառայություններով Սովետական Հայաստանի գիտության և կուլտուրայի բարգավաճման գործում: Հովսեփ Օրբելին ղեկավարել է ՍՍՌԿ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալը (1938—1940 թթ.), Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի կազմակերպչներից մեկը եղավ և, որպես նրա առաջին պրեզիդենտը, ղեկավարեց ու հաստատուն հիմքերի վրա դրեց նորաստեղծ ակադեմիայի աշխատանքները 1943—1946 թթ.:

Հ. Օրրելին առայժմ ունի շուրջ 70 տպագրված աշխատանքներ: Օրրելու բազմակողմանի և բազմաբովանդակ աշխատությունները կարելի է բաժանել երեք խմբի: Առաջին խումբը կազմում են Հայաստանի, Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի նյութական կուլտուրային ու արվեստին նվիրված ուսումնասիրությունները: Երկրորդ խումբը կազմում են հայերեն վիճակա՛ն արձանագրություններին վերաբերող գործերը և երրորդ խումբը կազմում են նրա բանասիրական, լեզվագիտական և գրականագիտական աշխատությունները:

Ականավոր գիտնական, տաղանդավոր կազմակերպիչ և մեծ քաղաքացի, ահա թե որպիսի հոյակ միասնություն է տնձնավորում ահագեմիկոս Հովսեփ Օրրելին:

Սովետական հասարակայնությունը և կառավարությունը բարձր են գնահատել Հ. Օրրելու ծառայությունները, նա ՍՍԽՄ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս է 1935 թվականից, Հայկական ՍՍԽ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս է 1943 թվականից: Օրրելին պարգևատրվել է Լենինի շքանշանով, Աշխատանքային կարմիր դրոշի երկու շքանշանով ու մեդալներով:

Ցանկանանք մեծավաստակ և ականավոր գիտնականին քաջաոգջություն, երկար կյանք և բեղմնավոր աշխատանք ի փառս սովետական դիտություն,